32. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՈՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին թաքավեր։ Ընտրա փրսրկվելանը ետը ընտրա կնեգյը խոխա չի պիրալ։ Ուրա՛ն վեզիրը շատ ա ըղոթըմ, ըստուծեն դաչանք անըմ, վեր աստուծ թաքավերեն մին ժա՛ռանգյ տա։

Պառավ վախտը էտ թաքուհին պատճառավեր ա տրեռնում։ Վեզիրն ուրա՛ն կյրքին եշըմ ա, ասըմ.— Թաքավերը ապրած կենա, կնեդյրտ մին ախճիգյ ա պրիլա՛կան, կյուղընական ըն։

Թաքավերն ասըմ ա.— Աստուծ թող ինձ ախճիգյ տա, յրես հանց պահիմ, վեր կյուղանան վեչ։

Թաքավերեն կնեգյը ըղադվըմ ա, մին ախճիգյ ա պիրում։ Թաքավերը որոշում ա ըխճրկանը հետե ծովումը մին տոն շինի, ուրա՛ն հարմարոթուններավը, վեր չար ծրեռք չի հրսնե։

Էտ ախճիգյը կյամ ա մրծանում։ Մեհեռ էլ մին դա՛ռվիշ ըսկանում ա, վեր իտի մին ախճիգյ կա։

Դա՛վրիշը եր ա կենում, քյինում էտ թաքավերեն երգյիրը։ Հնար ա քթենում, էտ ախճիգյը կյուղանըմ։

Քշրհանա թաքավերը ըսկանըմ ա, վեր ախճիգյը կյուղացալ ըն։ Եր ա կենում մարթ զարկում շոռ կյալ։ Վեչ մին տեղ քթենըմ չըն։ Ճարը կտրած թաքավերը հայտարարոթուն ա կյիրում, ցենտրը քյուչեքան կրպցնըմ, վեր. «Հու իմ ախճիգյս քթենա, ախճիգյս էլ ըմ տամ ուրա՛ն, թաքավերոթունես կեսն էլ»։

Հայտարարոթունը մին սալդաթ կարթըմ ա, քյինում թաքա-

վերեն կոշտը, ասում.— Յրես քու ըխճրկանըտ կքթանամ, թաքյի հինչ պահանշ ասիմ, տաս։

Թաքավերը ղաբուլ ա կենըմ։

Սալդաթն ասըմ ա.— Տու կտաս ինձ մին պարախոդ, ուրան քշողավը, մծերավը, վեց տարվա պաշարավը, իրեք տարի հղե յըմ քյիննական, իրեք տարե ետ կյամ։

Թաքավերը խոսկ ա տամ՝ իրեք օրումը էտ լոխ հրզըրե, հղե քցի։ Սալդաթը կյամ ա, իրեք օրանը ետը, պաշարը յոր օնում, պրախոդումը նստըմ, հղե ինում։

Իրեք տարի հղե յա քյինում, հրսնում տեղ, պարախոդան վեր ըն կյամ, քյինում մին ծմակու ղրաղ։

Սալդաթն ասըմ ա.— Մինուքը ղարավուլ քըշեցեքյ, մնացածը քյինանք վրերս։

Իտի էլ անում ըն։ Սալդաթը գյուդըմ ա, վեր դարվիշը ըտեղ ա կենըմ։ Քյնալիս թաքավերը մին մուտանա յա տամ սալդաթին, վեր ախճիգյը հիշտեղ տրեսնա ճինանչի։ Սալդաթը շատ ման կյալանը ետը, մին պնալի յա քթենում, ամմա մթեն ա ինում, ետ ա տեռնում կյամ վեշչուն կոշտը։ Վրերսըտեղան հնգերունքը կյամ ըն, տրեսնըմ ղարավուլչին սպանած, խրավածը կերած, քյեցած։

Շատ ըն մտածում հնգերունքը, թա հո՞ւ կինի սպանած, ամմա սալդաթը գյուդում ա, վեր տա դարվիշին պենն ա։ Թաքուն ա պահում, վեչ մինին ասըմ չի, ասում չի, վեր ըստեղ դարվիշ կա։

Էքյսը քնուտեղա եր ա կենում, հընդերունցը ասըմ.— Թող մըղանա մինը էլհա ղարավուլ վրեննը կենա, մնացածը քյինինքյ վրերս։

Իտի էլ անըմ ըն։ Շատ ըն շոռ կյամ, խրեգյ ըն շոռ կյամ, քթենում չըն ըխճրկանը տոնը։ Վրերսա ետ ըն կյամ, թա հաց օտին, տրեսնըմ ղարավուլչին էլհա սպանած, հացը կերած, քյեցած։ Սալդաթը գյուդում ա, էլհա ասըմ չի։

Քշերավ վեր ըն կենում, սալդաթը էլհա համին հրամանն ա տամ։

Հնգյերունքը շողաբ-շողաբ ըն ինում, ասըմ ըն.— Հի՞նչ ա, մրեզ պիրալ ըս ըստեղ կընգ-կընգ կտորի՞ս, ղարավուլ չընք վրեննը կենում, մընգ էլ տու վրեննը կաց, մունք քյինանք վրերս։

Սալդաթը ճարը կըտրած ղաբուլ ա կենըմ, ասըմ ա.— Լավ կինի, մընգ էլ յրես կկենամ, տուք քյեցեքյ։

Սալդաթը կենըմ ա, խորագյ իփում, պդրաստում, տրեսնըմ ա միչև հնգյերունքը կյալը, մին բեղավուր ածդահա մարթ եկավ

պարիյօր տվավ, Սալդաթը պարիյօրեն պարիյօր ա տամ. էտ էն դարվիշն ա ինըմ։

Դարվիշն ասըմ ա.— Խորադյը հազըր չի՞, քցի օտինքյ։

Սալդաթն ասըմ ա.— Հա, պադրաստ ա, հինչ օդիս, կա։

Սալդաթը ըտրան խորաձգյ ա տամ, իմացնըմ, թա հինչ կա ուտելի։ Կյինի էլ ա տամ։ Դարվիշը հարփրըմ ա։ Սալդաթը յոր ա օնում խանչալը, ըտրա կլոխը կտրում, թաղում, վեր հնդյերունքը դյիդան վուչ, թազադան ըսկսրմ ա խորադյ իփիլը միչև հնդյերունքը կյալը։ Հընդյերունքը հանդին մսլահաթ ըն անում, վեր. «Քյիննական ընք տըեսնանք սալդաթըն սպանած։ Պրախոդը յոր կօնինքյ, քյնանքյ»։

Կյամ ըն տըեսնում հի՞նչ, սալդաթը սաղ սըլըմաթ, խորադյ իփած, էնա եշըմ, թա կյան, օտին։

Հնդյերունքը զրմանում ըն, ասըմ ըն.— Էտ հի՞նչ պեն ա, վեր սպանալ չը՞ն։

Կյամ ըն օտում, խմըմ, քոն ինըմ։

Քշերավը եր ըն կենում, քյինում վըերս։ Վեր շատ շոռ ըն կյամ, մին ծակ ըն քթենում, էն պնալին քցըմ ըն, պենվում ա։ Տեսնըմ ըն ընդեղ մըեծ հարըստութուն, վըեսկե, մին էլ երկու պնալի։ Ցոր ըն օնում պնալիքյը, տուս կյամ, ըսկըսըմ շոռ կյալ ըխճրկանը հետան։ Էլլա մին շինութուն ըն քթենում։ Ըտեղ ընդրանա շատ հարըստութուն ա ինում, քանց սուվթումը։

Էլհա յըն շոռ կյամ ըխճրկանը հետան։

Սալդաթը քթենում ա ըխճրկանը տունը։ Էն քըթած պնալավը պենում ա, տըեսնըմ մին դարրետկա, յրան նստած մին ախճիգյ, ծրքակործ ա անում։

Ախճիգյն ասըմ ա.— Ա՛յ տղա, յրես դժոխկի մաշի յըմ, տո՞ւ ինիս, տուս եք ըստեզան, դարվիշը կկյա, քյրեզ ըսպանե։

Տղան ասում ա.— Ա՛յ ախճիգյ, վախե մել ընդրա կլոխը կնոխե յըմ կտրալ։

Համ ասրմ ա, համ հորը տված մուտանան նշանց տամ։

Ախճիգյը դաստի գյուդում ա, վեր հարն ա ղարկալ էտ տղեն։ Ասըմ ա.— Հարստութունին տըեղերը, նշանց կտամ, վեր յոր օնինքյ, փախչինքյ։ Ամմա դարվիշին էրկու ախպերը կկյան, մըեզ կտորին։

Սալդաթն ասըմ ա.— Տըեղերը գյուդում ըմ։

Ախճիգյը հորը մուտանան յոր ա օնում, ուրան մուտանան տամ էտ տղեն, հարստութունը նի յըն տամ պրախոդը վեր հղե ինին,

ըխճըկանը մեննն ա ընգյնըմ, վեր մին վըսկըճրա̈ծ դարյա թողալ ա ընդըեղ։

Ասըմ ա.— Տու ըստըեղ կաց, յըես քյինիմ վըսկըճրա̈ծ դարյաս պիրիմ։

Տղան ասըմ ա.— Չէ՛, տու կաց, յըես քյինիմ, պիրիմ։

Ախճիգյը ասըմ ա.— Չէ՛, վախըմ ըմ հնգյերունքըդ քյըեզ դըշմընութուն անին։

Տղան լսըմ չի, ըխճըկանը թողում ա ըտըեղ, քյինում դըրյին հրեյին։ Հնգյերունքը ղասիդ տղեն թողում ըն, պրախոդը խոդ տամ, քյինում։

Ախճիգյը պրախոդան հինչքան հարայ ա տամ, պրախոդը վըեննը չըն կցնում։

Քշողը յրա յա պըրծընըմ էտ ըխճըկանը յրա, թա թխե, վըխըցընըմ ա, ասըմ.— Քյնա̈ հորըտ ասե, վեր տու սալդաթ չըս տըեսալ, վեր քյըեզ քըթեննողը յըես ըմ, պրախոդ քշողը։

Ախճիգյը վխեյան նհետ համածայնվըմ ա։

Սալդաթը ծովեն զըրաղեն նստում ա, քննեքյ անըմ, թա հի՞նչ անի, հո՞ւնց անի մհենգյանց տենը։ Ըր ա կենըմ ընգյնըմ ծմակը, շոռ կյամ, վըերս քթենըմ, ապըըմ։

Մին ամեն տի ապըըմ ա, մին դա̈րվիշ ա շիհըմ։ Էն համին դա̈րվիշին մըեծ ախպերը։

Դա̈րվիշը օղըմ ա նի կապե սլդաթեն յրան, ըսպանի, սալդաթն ասըմ ա.— Հինչ ասիս, կանիմ, թա̈քյի ինձ ըսպանիս վուշ։

Դա̈րվիշն ասըմ ա.— Վեր տի յա, յըես քյըեզ յոր կօնիմ նո̈քյա̈ր։

Տանըմ ա տները նշանց տամ, վեր թմիզցնի, ամմա առանց ուրա̈ն նի չի մննի։

Մին տարան վեչ պակաս ըտեղ կենըմ ա, ամմա քշեր, ցիրեկ քննեքյ ա անըմ, ասըմ ա. «էս հի՞նչ գյանք ա, վեր յըես մաչին ըմ։ Դե մհե վեր կսպանե, թող սպանե»։

Մին հետ էլ յոր ա օնըմ, տո̈ռնը պենում, տեսնում մին սուրու լղար ծիյանք։ Վեր տո̈ռնը պենում չի՛, դա̈րվիշը կյամ ա։ Օզըմ ա սպանե ըտրան։ Սալդաթը ըղաչանք ա անում, վեր էլ պենալ չի։ Վեր շատ ա ըղաչըմ, դա̈րվիշը մեխկն ա կյամ։ Մեթկը փոխըմ ա, էլ ըսպանըմ չի։

Սալդաթը վեց ամսանը ետը տհենց էլ էն մին տո̈ռնն ա պենըմ տեսնըմ մըեծ կայք, հա̈րըստութուն կա։ Էլհա դա̈րվիշը կյամ ա, թա̈ թխե, սպանե, սալդաթը մշանք ըղաչանք, պըղատանք ա անըմ,

վեր դՅրվիշը ներում ա։ Սալդաթը մին առնանը ետը պենում ա իրեքինշի տՅոնը, տրեսնում քյոհնա պորթվելներավ լիգյը։

ԴՅրվիշը կյամ ա, թա կլՅոխը կտրե, տղան էլհա միննՅթ ա անում։

ԴՅրվիշը ասում ա.— Դե, վեր տի յա, քյըեզ իմ երդյիրաս տուս ըմ օնում։

Տղան լՅց ա ինում։ ԴՅրվիշն ասում ա.— Հիշտեղ օղում ըս տանիմ։

Պիրում ա ղուլլուղին հախը տամ մին լղար ծի, մին էլ մին ճղած պորտվել։

Սալդաթն ասում ա.— Պա ըստրանավ հի՞շտեղ կհասնիմ։

ԴՅրվիշը ըտրանա իվիլ լղար ծի յա տամ։

Տղան ըղաչանք ա անում, ասում ա.—Տա փիս ծի յա, մին օրիշը տո։

ԴՅրվիշը ասում ա.— Տա առաչվա ծիյան ճելլի յա քյինում։

Ասում ա.— Նստե ծին, աշկերտ հուի կալ, ծիյին մեհետ թխե, ասե վեր քաղաք ըս օղում քյինՅաս, ծին կես սհաթըմը հըսցնական ա։ Հիշտեղ փող հարկավեր կյա, պորթվելը թափ տո, փող ա վեր տոնըլական։

Սալդաթը յոր ա օնում վրեսկըշավ.աղ դարյան, մուտանան, պորթվելը, ծին եր ինում, քըղաքեն անումը տամ, մեհետ թխում, մինչը կես սհաթը տեղ ա հըսնում։

ՔյինՅամ ա էլ իվիլ թնգյՅնուց շՅրեր ինքյ օնում, կյենում, հըրրստանում, ապրում։ Էտ քաղաքը թաքավերեն նստած տեղն ա ինում, ըտրեղ մին քանե վախտ կենում ա, օրը տասներկու աման խորագյ օտում, մին լՅվ քյուքանում։ Մին քանի օրանը ետը թաքավերեն անա հըռակյիր ըն ստանում, վեր ախճիդյը կյամ ա հըղեցն ա։ Լոխ հըղըրվում ըն տՅուս կյան թմաշա։ Թաքավերը էտ ստալավոյին տըռնանը ընցնելիս լսում ա, վեր ըտեղ իստի մին մարթ կա, օրը տասնըէրկու աման խորադյ ա օտում։

Թաքավերն ասում ա.— Պերեքյ տեսնամ։

Պուրում չըն։ Թաքավերը կյամ ա, թՅ տեսնա, տղան տեղան եր ա կենում, դարրետկան տամ թաքավերեն, թաքավերն ասում ա. — Ախճիգյըս կյուղացած ըն իլՅլ, մհենգյ կյամ ա, հըրսանիք ըմ ընՅական, կկյաս։

Տղան ուրՅն ադրեսը տամ ա։ Էրկու օրանը ետը ախճիգյը պիրում ըն։ Սալդաթը մթկըմը ասում ա. «Հետաքրքիր ա, քյինՅամ, տեսնամ ախճիգյը հի՞նչ ա նաղլ անըմ»։

Ախճիգյը վրխելան նհետ ասըմ ա.— Ինձ պրախոդ քշողն ա քթալ։

Սալդաթը կյամ ա տոն։ Էքյսը բիգի հրըսանիքյ ինի։ Էտ ըխճըկանը բիդի տան էն պրախոդը քշողին։ Սալդաթը յոր ա օնում վսկըճրած դարյան, մուտանան քցում մաննը, սարքվըմ, քյնամ հրըսանիքյ։ Ինքյն էլ լավ շորեր ա ինըմ կյեցած։ Հրըսընքըմը լավ տեղ ըն նըստրցընըմ։ Փեսեն, ըխճըկանը ստոլեն պարյօր ա տամ։ Զրոնց ա անում, կյինի յըն խմըմ, ըխճըկանը նան պրախոդ քշողին կյենացըն ըն խմըմ։

Սալդաթը ստոլեն տակեն մաննը ետ ա անում, մուտանան քըցած ծեռքավը ստաքանը յոր ա օնըմ, թա խմե, ըխճըկանը աշկավն ա ընգյնըմ մուտանան։

Ախճիդյը օշը կուրցըրած ճղղում ա.— Վեչ մինը կյենացս խմե վուչ, տա չի ինձ քթալ, օղում չըմ ըտրա նհետ փսակվի՞մ։

Դերը հրցընըմ ա.— Հինչ ա պտահալ, էս հի՞նչ ղազար ա մեր կլոխը եկալ։

Ախճիդյը օշը կլոխն ա հվաքըմ, ասըմ.—Ըմընեքյը հրամած ա, լոխ փուխեցեքյ, ետավ կասիմ հինչ ա պտահալ։

Ըմընեքյը փոխըմ ըն, թազադան ստոլ ըն պենըմ, ախճիդյը մին-մին նաղլ ա անըմ, ասըմ.— Ա՛ հար, վեչ թա պրախոդ քշողն ա քթալ, էս սալդաթն ա քթալ, հեսե իմ նշանածս, մուտանաս փոխալ ըմ մուտընեն նհետ։ Սալդաթը ետ ա մնացալ, վրեսկե դարյին դարդան։

Պըտմելանը ետը թաքավերը հրամման ա տամ՝ պրախոդ քշողեն կլոխը կտրին։ Ընդեստանը ախճիդյը, թաքավերոթունեն կեսը, հարստոթունեն կեսը տամ ա սլդաթեն։ Ետնան հրսանեքյ ըն անըմ, ուրանց հետի փառավեր ապրըմ։

Ըտրանք հրսեն ուրանց մուրազեն, մունք էլ հրսնինքյ մեր մուրազեն։ Երգինքյան իրեք խնձոր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ տրռանը տական անշուկ տընողեն։